ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

01-ը մայիսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Մայիսի 1-ի՝ Աշխատանքի և աշխատավորների համերաշխության միջազգային օրվա առիթով

Մայիսի 1-ը աշխարհի հարյուրավոր երկրներում նշվում է որպես Աշխատանքի և աշխատավորների համերաշխության միջազգային օր. տոնական և դաստիարակչական խորհուրդ ունեցող այս օրն առանձնահատուկ տեղ ունի նաև մեր ազգային տոնացույցում և տասնամյակներ շարունակ մեծ հանդիսավորությամբ է նշվել հայ ժողովրդի կողմից: Աշխատասեր ու գործունյա մեր ազգը դարերի արդար ու արգասաբեր աշխատանքով է շենացրել իր հայրենիքը. բազում փորձություններ հաղթահարելով՝ վաստակել սեփական հողում ապրելու, արարելու իր իրավունքը:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Աբովյան համայնքի աշխատավոր բնակիչներ.

Մայիսմեկյան տոնի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ:

Յուրաքանչյուրիս պատասխանատու և պարտաճանաչ աշխատանքը կարևոր տեղ ունի մեր հայրենիքի ծաղկման և մեր համայնքի վաղվա օրը կերտելու գործում: Առանձնահատուկ շնորհավորում եմ իմ գործընկերներին, Աբովյանի համայնքապետարանի, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին, որոնց ճկուն միտքն ու արարող ձեռքը գործում է ի շահ մեր համայնքի բարօրության ու առաջընթացի:

Օրվա խորհրդին համահունչ մաղթում եմ բոլորիդ գործնական հաջողություններ և աշխատանքային առաջընթաց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ